

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ «ՔՆՆԻԿՈՆԸ»*

Ա. Ս. ՄԱՔՍԻՄՈՍՅԱՆ

Կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե Շիրակացու մատենագրական ժառանգության մեջ «Քննիկոնի» մասին որևէ տեղեկություն պահպանվե՞լ է: Պետրոս կաթողիկոսին ուղղված Գրիգոր Մագիստրոսի նամակում այդ առթիվ ասված է. «զոր և ինքն իսկ, որ մատենագրեաց զայգոսիկ յառաջնում իւրոյ Տրամարանութեան՝ բազում տարակուսանս և կեղերջականս: սակս մերոյ ազգային անփոյթ առնելոյ զայդպիսի գործառնութիւնս»¹, որ, այդ մասին «գծեալ գտաք և յայդմ մատենի մակագրութեան վերծանեաք»²:

Ուրեմն Շիրակացին «Քննիկոնում» գանգատվել է Հայաստանում կրթությանը ոչ պատշաճ ուղղորդություն հատկացնելու համար: Նման դժգոհություն կա Շիրակացու ինքնակենսագրականը համարվող փոքրիկ երկում՝ «Անանիայի Շիրակունւոյ երիցս երանեալ վարդապետի վասն որպիսութեան կենաց իւրոց»: Այն պահպանվել է մի շարք ձեռագրերում և հրատարակվել է մի քանի անգամ, թե՛ համառոտ և թե՛ ընդարձակ խմբագրություններով³: Լավագույնն ընդարձակն է, որ պահպանվել են Շիրակացու նախնական բնագրի մի շարք կարևոր հատվածներ, որոնք կրճատված են համառոտի մեջ: Բացի այդ, վերջինիս մեջ կան աղճատված նախադասություններ, որոնք անազավաղ պահպանվել են ընդարձակ խմբագրության մեջ: Հատկապես աղավաղված և աղճատված է ինքնակենսագրության համառոտ, մասամբ և ընդարձակ խմբագրությունների վերջը:

Ահա ինքնակենսագրության մեզ հետաքրքրող հատվածը.

«Եւ արդ՝ ես տրուպս Հայաստանեաց ուսայ ի նմանէ (Տյուֆիկոսից— Ա. Մ.) զնգաւր արուեստս գայս, որ թագաւորաց է ցանկալի, և բերի յաշխարհս մեր՝ առանց ուրով լինելոյ ձեռնտու, միայն ջանի իմոյ անձինս, ազնականութեամբ աղաթից սրբոյն Գրիգորի, թէպէտ և ոչ ոք եղև շնորհակալ և մեծաւաղ իմոյ աշխատութեան, քանզի և ոչ սիրաւ իսկ է ազգ մեր իմաստից և գիտութեանց, այլ ծոյլք են և ձանձրացողք: Զի իբրև եկի ես, բազումք ընթացան առ իս յուսումն. և սուղ ինչ խելամտեալ՝ թողին զիս և զնացին, ոչ մնացեալք կատարման արուեստին, բաւական համարեալ վարուց կենցաղոյս գորչալիկն առին. և փոքր ինչ յինէն մեկուսացեալք՝ սկսան ուսուցանել՝ զոր ոչն զիտէին, և քառազել զանձինս վարդապետս, որումն ոչ էին հասու: Կեղծա-

* Սույն քննության նախորդ երկու հատվածները լույս են տեսել «Լրաբերի» 1974 թ. 6—7 համարներում:

¹ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8 (Այսուհետև՝ Գրիգոր Մագիստրոսի թղթերը):

² Նույն տեղում, էջ 9:

³ Բ. Պատկանյան, Անանիայի Շիրակացու Մնացորդք բանից, ս. Պետերբուրգ, 1877, էջ 3—4, «Անանիա Շիրակացու մատենագրությունը», աշխատասիրությամբ Ա. Գ. Աբրահամյանի, Երևան, 1944 (Այսուհետև՝ «Անանիա Շիրակացու մատենագրությունը»):

տո՛րք և սնափառք ցուցանեն ունել զկերպարանս գիտութեանն և կռչիլ ի մարդկանէ՝ ռաբբի՝ հայցեն: Այլ և ի վերայ իմ պարսաւանս ասէին տգիտութեան, որք յինքնէն էին յերիւեալք, որ թէ ունէի շարութիւն իբրև զնոսա, ոչ ումէք առ ի վարդապետութիւն բանայի զբերան որպէս արդարև ապերախտից»⁴: Գրիգոր Մագիստրոսը իր նամակում այս հատվածն է ակնարկում, նշելով, որ այն կարգացել է Շիրակացու «Քննիկոնի» մեջ՝ Տրամաբանության սկզբում («յառաջնում իւրոյ Տրամաբանութեան»):

Մաշտոցի անվան Մատենադարանի № 699 ձեռագրում, որից կատարված է Շիրակացու Ինքնակենսագրության հրատարակությունը՝ ընդարձակ խմբագրությամբ և 10381 ձեռագրում, որտեղ Շիրակացու պահպանված երկերի քանակը, դասավորությունը և խմբագրությունները նույնն են նախորդի հետ, Շիրակացու գանգատը պարունակող «Անանիայի Շիրակունւոյ երիցս երանեալ վարդապետի վասն որպիսութեան կենաց իւրոց» բաժինը գտնվում է Թվաբանության սկզբում: Ահա այդ երկերի ցանկը.

ՁԵՌԱԳԻՐ 699.

187բ Անանիայի Շիրակունւոյ երիցս երանեալ վարդապետի վասն որպիսութեան կենաց իւրոց

194ա Անանիայի յազագս կատարման համարողութեանն և կերպից հարցման

204ա Գրեմ ձեզ և խրախնանականս յորժամ ի կերակուրս և յըմբելիս զուարհանայք և կամիք խաւսել բանս զուարհացուցիչս և ծիծաղականս

207ա Անանիայի Շիրակունւոյն Համարողի յազագս կշռոյ և կշռոց և կըշռորդաց

211ա Անանիայի Շիրակունւոյ Համարողի յազագս չափոյ և չափուց և առտառաց

214ա Անանիայի Շիրակունւոյ Համարողի թիւք որչափութեան տանց Հին Կտակարանացն

215ա Նորին՝ թիւք որչափութեանց Նոր կտակարանացն (բ էջը, որտեղ պետք է լինե՛ր նաև հաջորդ երկի վերնագիրը, չի գրված: Այն դնում ենք № 10381 ձեռագրից (էջ 331ր)

216ա Պատմութիւն երկոտասան քաւանց

217ա ՎՃԱՐՈՒՄՆ ԱՆԱՆԻԱՅԻ ॥ ՇԻՐԱԿՈՒՆԻՈՅ ԺՈՂՈՎԱԾՈՅՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ ՓԱՌՔ ԱՄԷՆ:

Վերջին նախադասությունը վկայում է, որ այս բոլորը քաղված են Շիրակացու ժողովածուից: Նույնն է նաև մյուս ձեռագրում:

Պարզվում է, որ Շիրակացու այս Թվաբանության և Գրիգոր Մագիստրոսի վկայած Տրամաբանության միջև սերտ կապ կա: Հույները թվաբանություն ասելով հասկանում էին երկու տարբեր գիտություններ. տեսական թվաբանություն և գործնական թվաբանություն: Թվաբանությունը (արիֆմետիկան) ըստ նրանց՝ թվերի վերաբերյալ գիտություն էր, որի առարկան թվերի հատկությունների ուսումնասիրությունն էր, նրանց բաժանումը դասերի՝ կենտ ու զույգ, պարզ ու բարդ և այլն: Այն տեսական գիտություն էր: Գործնական թվա-

⁴ «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 208—209.

բանությունը բոլորովին առանձին գիտություն էր և հայտնի էր լոգիստիկա-անունով⁵, Հունական դպրության հմուտ դիտակ Գրիգոր Մագիստրոսին անծանոթ չէին ո՛չ Պլատոնն ու Նիկոմաքոսը, ո՛չ էլ արիֆմետիկան ու լոգիստիկան⁶։ Ուստի, Շիրակացու «Տրամաբանություն» ասելով նա նկատի ունի նրա գործնական թվաբանությունը, որի սկզբում էլ գտնվում է հեղինակի գանգատը պարունակող առաջարանը։

Շիրակացին դժգոհելով իր վիճակից, շրջապատից, որոշ աշակերտներից և հատկապես զրպարտիչներից, որոնք հերյուրանքներ էին հորինում նրա անձի, գիտելիքների և գործունեության մասին, գրում է. «Բայց քանզի զմտաւ ածեմ զտէրունական զձայն, որ ասէն. «Իմ է վրէժխնդրութիւն և ես հատուցից»։ Եւ դարձեալ թէ՛ «Արկ զոսկիդ իմ ի սեղանաւորս և ես եկեալ տոկոսեալք պահանջիցեմ»։ Ապա առ արգելի յումեքէ, որք կամեցան ուսանել և ոչ այսուհետեւ արգելից»։ Այլ և զայս անմահ թողում ձեզ, վարդապետք, որք յետ իմ գայցէք յաշխարհս ուսումնասիրացդ և փափագողացդ իմաստից և գիտութեանց։ Եվ Քրիստոսի ձրեաց շնորհողին փառք, պատիւ և իշխանութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն»⁷։ Բնագրի այս հատվածի հրատարակության մեջ մի քանի կետադրական և ձեռագրագիտական վրիպումներ կան, որոնք փոխել են նյութի իմաստը, այն դարձրել անհասկանալի։ Շիրակացին Աստվածաշնչից երկու քաղվածք է բերել, այնինչ տպագրում երեքն է, քանի որ նույն աղբյուրի քաղվածք է համարվել նաև հեղինակի պատասխանը։ Հրատարակիչը ճիշտ չի բացել պատվագրված «վարդապետ» բառը. եղակին դարձրել է հոգնակի՝ «վարդապետք»։ Առաջին հայացքից աննշան թվացող այս վրիպումներն ուղղելուց հետո, բացվում է «Ինքնակենսագրություն» կոչված երկի գաղտնիքը։ «Բայց քանզի զմտաւ ածեմ զտէրունական զձայն, որ ասէն. «Իմ է վրէժխնդրութիւն և ես հատուցից»⁸, Եվ դարձեալ թէ՛ «Արկ զոսկիդ իմ ի սեղանաւորս և ես եկեալ տոկոսեալք պահանջիցեմ»⁹. ապա՝ ոչ արգելի յումեքէ, եւ կամեցան՝ ուսանել. և ոչ այսուհետեւ արգելից։ Այլ և զայս անմահ թողում ձեզ վարդապետք, որք յետ իմ գայցէք յաշխարհս ուսումնասիրացդ և փափագողացդ իմաստից և գիտութեանց»։ Ընդգծված առաջին նախադասությունը Շիրակացուն է, և շա-կերտների կարիք չունի. երկրորդ նախադասության անհասկանալիության վրա ժամանակին ուշադրություն է հրավիրել Հ. Տաշյանը¹⁰։

Առաջին քաղվածքի տունն Աստվածաշնչում այսպես է. «Այի զանձանց վրէժ խնդրէք, սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան, քանզի դրեալ է. իմ է վրէժխնդրութիւն և ես հատուցից, ասէ Տէրն»։

Երկրորդն առակ է, որը վերջանում է այսպես. «Պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ի սեղանաւորս, եւ եկեալ ես տոկոսեօք պահանջէի. գիմը»։

Այս երկու քաղվածքներով Շիրակացին պատասխանել է բոլոր բանասարկուներին և գրել, որ կվարվի այնպես, ինչպես տերն է հատուցում կամ

⁵ М. Е. Ващенко-Захаренко, История математики, т. 1, Киев, 1883, стр. 126.

⁶ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 5, 8, 10, 25, 66, 71 և այլն։

⁷ «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 209։

⁸ Աստուածաշունչ, Քուդթ առ Հոովմեացիս, ԺԲ—19։

⁹ Աւետարան ըստ Մատթէոսի, ԻԵ 27։

¹⁰ Յ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի վիեննա, Վիեննա, 1895, էջ 175, հմմտ. Բ. Կյուլիսեւրյան, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի Հայոց, Անթիլիաս, 1961, էջ 1199։

պատվիրում հաստատել, որ ինքը շատ լավ է գիտակցում իր աշխատության արժեքը և այն շրջանառության մեջ դնելու արդյունքը: Հետաքրքրական է, որ նա Ավետարանի «արժաթ» բառը փոխել է «ոսկի» բառով, որով ավելի է գնահատել իր աշխատությունը: Ուրեմն՝ նա ոչ միայն երբեք վրեժխնդիր չի եղել, չի արգելել իր մոտ սովորել ցանկացողներին, այլև նրանց և գիտությունների հետագա ուսումնասիրողների համար «անմահ վարդապետ» այսինքն՝ ուսուցիչ է թողել հանձնիս «Քննիկոնի»¹¹, քանի որ «անմահ վարդապետը» միայն դիրքը, դասագիրքը կարող է լինել: Սխալ կլիներ կարծել, թե Շիրակացին իր ինքնակենսագրությունը նկատի ունի, երբ գրում է. «Այլ և զայս անմահ թողում ձեզ վարդապետ», որի միջոցով հետագա սերունդները պետք է իմաստություն և գիտություն ուսումնասիրեն¹²:

Այլևս կասկած չի մնում, որ Շիրակացու անունով հայտնի ինքնակենսագրական երկը «Քննիկոնի» Առաջաբանից հատված է:

Այս դեպքում ինչու է «Քննիկոնի» ներածության մեջ Շիրակացին այդքան հանգամանորեն խոսում իր ուսուցչի՝ Տյուբեկոսի մասին, մի՞թե այն անհրաժեշտ է «Քննիկոնի» համար:

Այս հարցի պատասխանը գտնում ենք նույն տեղում, դարձյալ բնագրական որոշ ուղղումներ կատարելուց հետո: Շիրակացու հասցեին հերյուրված պարսավանքներին առնչվող հատվածն ունի հետևյալ շարադրանքը. «Այլ և ի վերայ իմ պարսաւանս ասէին տգիտութեան, որք յինքենէ էին յերիւրեալք. որք է ունէի շարութիւն իբրև զնսա, ոչ ումէք առ ի վարդապետութիւն բաճայի զբերան Թուլէս արդարև ապերախտից»¹³: Նախադասության երկրորդ մասում շատ որոշակի չէ հերյուրանքների իմաստը: Մաշտոցի անվան Մատենադարանի № 511 ձեռագրում պահպանվել է ընդգծված մասի ճիշտ ձևը. «որք է ունէի շարութիւն իբրև զնսա, ոչ ումէք առ ի վարդապետութիւն, բաճայի զբերան Թուլէս արդարև ապերախտից»¹⁴: Ահա այս պարսավանքներին պատասխանելու համար է Շիրակացին այնքան մանրամասնորեն ինքնակենսագրական

¹¹ Համառոտ խմբագրության մեջ այս բանը չի գիտակցված. «Նու զայս անմահ թողում ձեզ, վարդապետք ուսումնասիրաց և փափաքողաց մի արգելէք և Քրիստոս, որ ձրի շնորհատու է առնորդ զհատուցումն» («Անանիայի Շիրակացու Մնացորդ բանից», էջ 4): Ստացվում է, որ ուրիշները, մի քանի տող վերև, Շիրակացուն են մեղադրում, որ նա արգելել է ոմանց սովորել (զորա համար էլ Շիրակացին գրում է, որ «ոչ արգելի յումեք որք կամեցան ուսանել»): Հիմա էլ նա ինքն է կոչ անում այն վարդապետներին, որոնց ինքը սուտ «բարբի» է համարում, թե «մի արգելէք ուսումնասիրաց և փափաքողաց»:

¹² Հետաքրքրական է Շիրակացու այս հատվածի նմանությունը Մ. Խորենացու Պատմության Առաջաբանի հետ: Մ. Խորենացու «Հայոց Պատմությունը» ինչպես երևում է, Անանիայի սիրած գիրքն է եղել, — գրում է Մ. Աբեղյանը: Թվում է Խորենացու ազդեցություն է երեւում նրա գանգատների մեջ» (Մ. Աբեղյան, Երևան, 1968, էջ 417—418): Մ. Խորենացին դիմելով Սահակ Բագրատունուն, նրանից պատվեր ընդունելու առթիվ գրում է. «Ցաղագս որոյ հեղտաբար ընկալեալ զքո խնդիրդ, աշխատասիրեցայց ածել ի կատարումն. անմեղ ի յիշատակ քոզու զայս քեզ, և որ զկնի քոյիմէն են զալոց ազգք» (Մովսիս Խորենացու Պատմության Հայոց, թիֆլիզ, 1913, էջ 8): Շիրակացին դիմելով իր գործի ժառանգորդներին, գրում է. «Այլ և զայս անմեղ քոզու ձեզ վարդապետ, որք յետ իմ զայցեք յաշխարհն ուսումնասիրացդ և փափաքողացդ իմաստից և գիտութեանց» («Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 209): Ինչպես տեսնում ենք, մեր ընդգծած դարձվածքների նմանությունը ակնհայտ է:

¹³ «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 209 (ընդգծումը մերն է—Ա. Մ.):

¹⁴ Մատենադարան, ձեռ. № 511, էջ 6ա:

տվյալներ բերում և խոսում իր ուսուցչի մասին: Այն պատասխան է, հատկապես երկրորդ հերյուրանքին. «ոչ ում էք է առի վարդապետութիւն»: Զրպարտել են Շիրակացուն, որ նա վարդապետական կրթութիւն չի ստացել, չի սովորել որևէ մեկի մոտ այդ ուսմունքը և Շիրակացին շարադրում է իր ուսումնառութեան պատմութիւնը, ցույց տալու համար, որ նա իսկապես վարդապետ է և տիրապետում է համարողութեան ուսմունքին: Հայաստանում կիրառվող դպրութիւնը (եռյակ արվեստ) ամբողջովին տիրապետելուց հետո, ութ տարի սովորել է Տյուբիկոսի մոտ և սովորել «լիով զարուեստ համարողութեան», նաև հմտացել բազմաթիվ գրքերի մեջ «որք ոչ ի մերս են թարգմանեալ լեզուս»: Դրանք էին «յայտնիք, գաղտնիք, արտաքինք, արուեստականք և պատմադիրք, բժշկականք, ժամանակագիրք և զի» ևս մի մի անուանիցեմ քանզի չիք ինչ գիրք, որ առ նմա ոչ գտանէր»¹⁵:

Իսկ ո՞ւմ մոտ էր Շիրակացին կրթվել և ումի՞ց էր վարդապետական աստիճան ստացել: Դա ըլլալուհայցի վարդապետ Տյուբիկոսն էր «այլ լի իմաստութեամբ և գիտակ հայերեն դպրութեան և լեզուի և երևելի թագաւորաց», որի մոտ համարողութիւն սովորելու էին գնում ամեն տեղից, նույնիսկ թագաւորանիստ Կոստանդնուպոլսից:

Տյուբիկոսը շատ է սիրում Շիրակացուն և նրան չի խնայում իր գիտութիւնը, նույնիսկ թարգմանութիւններ է կատարում նրա համար. «Եւ սիրեաց զիս, որպէս զորդի իւր և պարապեաց յիս յամենայն խորհրդոց իւրոց, մինչև նախանձեալ ընդիս ամենայն աշակերտակցաց իմոց, որք ի դրանէն արքունի»¹⁶: Իսկ թե ինչու է սիրել Տյուբիկոսը Շիրակացուն, նույնպէս պատճառաբանված է. նա զինվորական ծառայութիւնը անցկացրել է Հայաստանի տերիտորիայում, ծանոթացել հայերի կյանքին, հայերեն սովորել և բարի հիշողութիւններով հեռացել այնտեղից: «Գոհանամ զԱստուծոյ,— ասում է. նա, երբ Շիրակացին դիմում է նրան սովորելու համար,— որ առաքեաց զքեզ ի խնդիր իմաստից, տանել քեզ զարուեստս զայս ի վիճակի սրբոյն Գրիգորի»¹⁷: Առաւել ուրախ եմ, որ յինչև աշակերտի աշխարհն այն, զի ես ի մանկութեանն ժամանակի հարուստ ամս կացի ի բարիս երկրին Հայոց և ցնծամ զերթալ գիտութեանս ի նա, զի ի ժամանակս յայս տգիտութիւն էր ի նմա»¹⁸: Ահա թե Շիրակացին ումից է ստացել վարդապետական ուսումնառութիւնը, համարողութեան ուսմունքը:

Պատասխան է տրված նաև մյուս հերյուրանքներին. ինչ չարութեան մասին կարող է խոսք լինել, երբ մարդը մեծ տառապանքներով, միմիայն իր ուժերով, առանց որևէ մեկի օգնութեան, հայրենիք է բերել համարողութեան հզոր արվեստը. «զհզաւր արուեստս զայս, որ թագաւորաց է ցանկալի, և բերի յաշխարհս մեր՝ առանց ուրուք լինելոյ ձեռնտու, միայն ջանիլ իմոյ անձինս»: Սա մեծագույն հայրենասիրութիւն է, անսահման բարութիւն, չնայած «ոչ ոք եղև շնորհակալ և մեծարաւ իմոյ աշխատութեան»¹⁸: Անշար է Շիրակացին. նա դպրոց է բաց անում և դասավանդում հայ մանուկներին համարողութեան գիտութիւնը:

15 «Անանիա Շիրակացու մատենագրութիւնը», էջ 207.—208:

16 Նույն տեղում, էջ 207:

17 Նույն տեղում, էջ 207:

18 Նույն տեղում, էջ 208:

Երրորդ պարսավանքին պատասխանում է ս. Գրքից ընդված քաղվածքներով և հաստատում իր դավանանքը, որի մասին խոսեցինք վերևում:

Այս Ինքնակենսագրությունը, ինչպես նկատել ենք, Ներածության մի մասն է միայն: «Քննիկոնի» նպատակը հայ իրականության մեջ ուսման գործը բարելավելն էր: Այն գործողության մեջ էր դրվում որպես տոմար, որին նախորդում էին Թվաբանությունը, Երաժշտությունը, Երկրաչափությունն ու Աստղաբաշխությունը որը և պետք է պատճառաբանվեր ավելի հանգամանորեն: Բացի այդ, քառյակ արվեստների ուսումնասիրությունը չէր կարող սկսվել գործնական թվաբանությամբ, առանց տեսական թվաբանության:

Դավիթ Անհաղթը, որին փիլիսոփայության մեջ հետևում է Շիրակացին, գրում է. «Նախ և առաջին տեսականն, վասն զի պատուականագոյն է, քան զգործնականն, վասն զի տեսականին ամենայն գոյք ենթակային, իսկ գործնականին միայն մարդկային հոգիք»¹⁹. Այս դրույթը կիրառված է «Քննիկոն»-ում, Ներածությանը (Ինքնակենսագրություն) հաջորդող նյութի հանձնարարականում, որն ունի «Անանիայի յաղագս կատարման համարողութեանն. և կերպից հարցման» խորագիրը, սկսվում է այսպես. «Ջամենայն ասաց իմաստուն, թէպէտ եւ սակաւ ի բազմաց, եթէ զինչ ընդունելութիւն, զինչ բացաղութիւն, զինչ բազմապատիկ, եւ բոլորովին յաղագս բաժանմանց, եւ ապացուցից պիտանացու ելոյր սոցայցն տեսութեանց: Համառատ քեզ ընձեռութիւն առնելով՝ փորձեցայց ի ձեռն սակաւուց իբր Ներածութեան եղանակի, զառ ծերունեացն անցանելով բանի ի խորագունիցն ի բաց կալ խնդրոց, և պարզագունիցն չափաւորապէս հանդիպելով:

Արդ, ասաէն իսկ վաղվաղակի յաղագս հարցման և լուծման»²⁰. Ապա հաջորդում են հարցում-խնդիրները:

Այս բնագրի առաջին հրատարակիչ Գ. Տեր-Մկրտչյանը վերահիշյալ Առաջաբանը համեմատելով Պորփյուրի Ներածության հետ, գրում է. «Անանիան կամ մեկ-ուրիշը Պորփյուրի Ներածության սկզբնավորությունը կամեցել է հարմարեցնել իբրև առաջարան Հարցումներին: Թերևս Շիրակացին ուներ և մի զլուխ իսկապես «Յաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցման» վերնագրով, որի մեջ խոսվում էր թվաբանական չորս գործողությունների՝ գումարման, հանման, բազմապատկության և բաժանման մասին (= ընդունելութիւն, բացաղութիւն, բազմապատիկ և բաժանմունք), որոնց միայն վերնագրերն են պահվել Առաջաբանի այս հատվածում»²¹. Այնուհետև նա շարունակում է. «Պորփյուրի բանաբաղը «Ջամենայն ասաց իմաստունն» ասելով, մեր կարծիքով հասկանում է Անանիային: Անտեղի կլիներ, մեր կարծիքով, ենթադրելը, թե Շիրակացին ինքն է Պորփյուրի բանաբաղը և «իմաստունն» ասելով հասկանում է յուր վարժապետ Տյուբիկոսին, որինը կլիներ այդ դեպքում և Հարցումները: Մինչդեռ անկարոտ է ապացուցության, որ Հարցումների մեջ խոսողը ոչ թե Տյուբիկոսը, այլ ինքը Շիրակացին է (ալուայ ի հօրէն իմմէ, ի Շիրակ առ մեզ եկն այսպէս լուայ ի վարդապետէն, այսինքն է Տյուբիկոսից և այլն, և այլն)»²². Գ. Տեր-Մկրտչյանը բաց է թողնում սույն Առաջաբանը որ-

19 Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, Երևան, 1960, էջ 120:

20 Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, Վաղարշապատ (արտատպություն 1896 թ. «Արարատից»), էջ 11—12:

21 Նույն տեղում, էջ 11:

22 Նույն տեղում:

պես Պորփյուրի բանաբաղի գործ: Նրան հետևում են Հ. Օրբելին, «Հարցումներին» հայերեն և ռուսերեն հրատարակության մեջ²³ և Ա. Աբրահամյանը: Վերջինս գրում է. «Ընդմիջարկող հեղինակը հենվելով Շիրակացու ներածականի այն խոսքերի վրա, որ ասված է թե «կարճառատ կարգեցի սակաւս ի բազմաց...», Շիրակացուն անվանում է «իմաստուն» և շեշտում Շիրակացու խնդրադրի սկզբի բառերը. «Ջամենայն ասաց իմաստունն, թէպէտ և սակաւ ի բազմաց...»²⁴: Հետաքրքրական է այստեղ կոմպիլատոր հեղինակի ակնարկը Շիրակացու բաժանման գործողության մասին... «կոմպիլատոր հեղինակի ժամանակ Շիրակացու բաժանման գործողությունը անդամահատված վիճակում չի եղել»²⁵:

Իրականում ո՛չ ուրիշ բանաբաղ կա, ո՛չ «ընդմիջարկող հեղինակ», ո՛չ «կոմպիլատոր հեղինակ», ո՛չ էլ «իմաստուն»: Բանն այն է, որ խնդրո առարկա Առաջաբանի առաջին երեք բառերը հին բնագրի ոչ ճիշտ բառանշատման հետևանքով աղավաղվել են: Դրանց ճիշտ ձևը պահպանվել է Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի մի ձեռագրում, որը հրատարակվել է դեռևս 1853 թ.²⁶ և Երուսաղեմի № 68 ձեռագրում²⁷: Այդ ձեռագրերում «Ջամենայն ասաց իմաստունի» փոխարեն գրված է «Ջամենայն ասացի մասունս»: Ինչպես տեսնում ենք, «ի»-ն սկզբից միացվել է «մասունս» բառին և ստացված «իմաստունս» անիմաստ տառաշարքը «տ» տառի հավելմամբ իմաստավորվել է «իմաստուն» ձևով և նախադասությունն ու Առաջաբանը զրկել իսկական իմաստից:

Ուրեմն, այս Առաջաբանի հեղինակը Շիրակացին է: Պորփյուրի ներածության և այս Առաջաբանի որոշ հատվածների համընկնելը որևէ կասկած չպիտի հարուցի, որովհետև, ինչպես արդեն տեսանք, Շիրակացու և Խորենացու առաջաբանների որոշ նախադասությունների նմանությունից, Շիրակացին Խորենացուց (այս դեպքում Պորփյուրից) վերցրել է այն, ինչ լիովին արտահայտում է իր մտքերն ու ասելիքը:

Շիրակացին, իր սովորության համաձայն, «Քննիկոնի» նոր ենթարաժինը սկսել է Առաջաբանով, որը թյուրիմացաբար դուրս է նետվել: Այն ամփոփում է նախորդ բաժինը և ցույց տալիս հեղինակի ասելիքը նոր բաժնում:

Վերին աստիճանի արժեքավոր այս հատվածը պարզաբանում է բազմաթիվ կարևոր հարցեր՝ կապված Շիրակացու գործունեության և «Քննիկոնի» հետ:

Սկսենք վերնագրից. «Անանիայի Շիրակունեոյ յաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցման» խորագիրը «Քննիկոնը» մասնատողն է դրել, ելնելով սույն Առաջաբանից: Վերնագրի և այդ նյութի միջև ոչ մի թվա-

²³ И. А. Орбели, Вопросы и решения, Петербург, 1916.

²⁴ «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 64—65:

²⁵ Նույն տեղում, էջ 65: Այստեղ Ա. Աբրահամյանը հիշյալ «Առաջաբանը» իջեցրել է տողատակ՝ որոշ կրճատումներով (հմտ. էջ 227):

²⁶ «Բազմավէպ», Վենետիկ, 1853, էջ 48:

²⁷ Ն. Պողոսյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 219, Ա. Սյուրմեյանը նույն հավաքածուի իր կազմած Ցուցակում այսպես է բառանշատել. «Ջամենայն ասաց ի մասունս», որ նույնպես ճիշտ չէ, հմտ. Ա. Սյուրմեյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց վանքի, հ. Ա, Վենետիկ, 1948, էջ 176:

բանական գործողություն չկա, ինչպես ենթադրել է Գ. Տեր-Մկրտչյանը և նրա հետևորդները՝ Ա. Աբրահամյանը²⁸։ Ինչպես կտեսնենք և որ հավաստում է այս Առաջաբանը, թվաբանական գործողությունները գտնվել են ներածության մեջ, այս վերնագրից առաջ։ Սույն Առաջաբանը մատնանշում է Տեսական թվաբանության ավարտը, «համարողութեան կատարումն» և Գործնական թվաբանության սկիզբը։ «Յաղագս կատարման համարողութեանն» բառերը հենց համարողության ավարտի («կատարման») և նոր բաժնի սկսվելու («Արդ, աստէն իսկ վաղվաղակի յաղագս հարցման և լուծման») մասին է հայտնում և ապա շարադրում բովանդակությունը։ «Քննիկոնը» մասնատողը Շիրակացու ուսումնառության, համարողության արվեստի պիտանի լինելու մասին տեսությունը և հայրենիք բերելու վերաբերյալ մասը առանձնացրել ու վերնագրել է «Անանիայի Շիրակունւոյ երիցս երանեալ վարդապետի վասն որպիսութեան կենաց իւրոց», իսկ նրան հաջորդող նյութը խորագրել է «Անանիայի Շիրակունւոյ յաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցման» առնելով նույն այս Առաջաբանից. «Ջամհնայն ասացի մասունս, թէպէտ և սակաւ ի բազմաց՝ եթէ զինչ ընդունելութիւն, զինչ բացադրութիւն, զինչ բազմապատիկ և բոլորովին յաղագս բաժանմանց, եւ ապացուցից պիտանացու ելոյր սոցայցն տեսութեանց»։

Համառուտ քեզ ընձեռութիւն առնելով, փորձեցայց ի ձեռն սակաւուց իբր ներածութեան եղանակի՝ զառ ծերունեացն անցանելով բանի ի խորագրութիւն ի բաց կալ խնդրոց, եւ պարզագունիցն շափաւորապէս հանդիպելով։

Արդ, աստէն իսկ վաղվաղակի յաղագս հարցման և լուծման»²⁹։

Այստեղ Շիրակացին դիմում է Անաստաս կաթողիկոսին, որոշ բացատրությամբ ներկայացնում իր և՛ արածը, և՛ անելիքը։

Ուրեմն, այս փոքրիկ առաջաբան-հանձնարարականից առաջ եղել է ներածությունը։

Ներածության մեջ ներկայացվել են համարողության բոլոր մասերը՝ գումարում, հանում, բազմապատկում և բաժանում։ Վերջինիս տակ բաժանման գործողությունից բացի Շիրակացին նկատի ունի նաև թվերի բաժանումը զույգ ու կենտ խմբերի և այլն։ Ուրեմն, ներածության մեջ Շիրակացին Տեսական թվաբանությունն է շարադրել և ապացուցել թվաբանության անհրաժեշտությունը։ Այստեղ նկատի պետք է ունենալ նաև, այսպես կոչված, ինքնակենսագրությունը, որի մեջ նույնպես ապացուցվում է համարողության արվեստի օգտակարությունը։

Շիրակացին այնուհետև կաթողիկոսին տեղյակ է պահում, որ ինքն այդ ամենը շարադրել է համառոտ՝ որպես ներածություն, հին, խրթին, անհասկանալի բաները դուրս է թողել, իսկ պարզագույնները ներկայացրել է համառոտ։ Այս ամենը նա արել է կաթողիկոսի համաձայնությամբ, և նրան ավանդել-պարգևել («քեզ ընձեռութիւն առնելով»)։

Շիրակացու ժառանգության նորովի քննությունը ցույց է տալիս, որ «Քննիկոնի» ստեղծման ժամանակ Անաստաս կաթողիկոսը և Շիրակացին նամակագրական կապի մեջ են եղել։ Առաջինը տոմարի ու նրա հետ կապված հար-

²⁸ «Անանիայի Շիրակացու մատենագրությունը», էջ 48—64։

²⁹ Մատենադարան, ձեռ. № 699, էջ 194ա։

ցերի լուծում է. պահանջել, իսկ երկրորդը տոմարն ու տոմարական հարցերը մատուցել է յուրովի՝ համարողական արվեստի նվազագույն շարադրանքով:

Այդ նամակագրության արդյունք են Շիրակացու Հայտնության ու Զատկի ճառերը, որոնք, մեր կարծիքով, միևնույն գործի մասեր են, դարձյալ հետագայում առանձնացված, ուղղված Անաստաս կաթողիկոսին, որպես նրա հարցումների ու առաջարկությունների պատասխան: «Բազում աշխատութիւն գործառնութեանս մերոյ վասն սրբոյ տաւնից Աստուծոյ էր յոր հասաքս եւ զոր ճառել արժանաւոր եղաք»³⁰, այսպես է սկսվում աշխատանքը և, ինչպես տեսնում ենք, խոսքը ոչ միայն Հայտնության տոնի մասին է, այլ հոգևոր տոների ընդհանրապես. «Նախ զտաւնն ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է սկիզբն տաւնից եւ տարեկանաց մերոյ, եւ զլուիս կացուրդաց եւ ամենայնից ի Քրիստոս յիշատակաց»³¹, Շիրակացին վերոբերյալ սկսվածքով շարադրում է Հայտնության տոնի մասին իր ասելիքը և ավարտում առանց «փառքի» կամ «ամէնի», քանզի այնուհետև շարադրում է մյուս տոնի պատմությունը: «Զտաւն սրբոյ Զատկիս ուսաք ի Մովսիսէ... Զսուրբ տաւն Զատկիս հաստատեաց Տէր ի վերայ լուսնի: Լուր բանին որ ասէ թէ...» և այլն³², Զատկի ճառը սկսվում է այնպես, ինչպես նախորդը. «Տաւն սրբոյ ծննդեան Քրիստոսի ԲԺ աւուր յառաջ քան զտաւն Մկրտութեան, ոչ կարգեցաւ ի սրբոց առաքելոցն...»³³ և ավարտվում է հիշատակարանով, որ նշվում է հեղինակի անունը: Հայտնության տոնին նվիրված ճառի մեջ կան այնպիսի արտահայտություններ, որոնք վկայում են, որ Շիրակացին դիմում է հայոց կաթողիկոսին. «Զոր պարտ է զիրաքանչիւր տաւնիցն պատճառ Օննդեանն և Մկրտութեան ծանուցանել, զի եւ դուք ի նոյն փութացեալք կատարեցէք», «Բայց դու զնուազեցուցիչսն ասես, եւ զարածրացուցանողաւքն զանց առնես, որպէս եւ նոյն ինքն Զրիգոր ասէ», «Բայց մեզ մի լիցի ի մարդկայնոցս երկնել յահէ, առաւել քան յաստուածայնոյն, եւ եթէ հաճոյ թուեսցի ձեզ, զՅովբայն բառբառեցայց», «Իննեորդ՝ Յայտնութիւն ըստ հայոց փոփոխմամբ և ըստ չորից-չորից ամաց. եւ եթէ զիարդ գիտելի է, եւ կամ ընդէ՞ր ոչ առկայացեալ ըստ այդոց ազգաց, յիւրում տեղւոյ պատմեցից ըստ կարգի Տոմարին»³⁴:

Հայտնության ճառից տեղեկանում ենք, այսպիսով, որ այն գրված է Տոմարից, այսինքն՝ նաև «Քննիկոնից» առաջ: Ուրեմն, այդ ժամանակ է գրված նաև Զատկի ճառը: Ելնելով հարցմունքի թելադրանքից և խոսելով Արեգակի, Լուսնի և աստղերի ստեղծման մասին, Շիրակացին Զատկի ճառում գրում է. «Եւ արար Աստուած զերկուս լուսաւորսն մեծամեծս. զլուսաւորն մեծ յիշխանութիւն տունջեան, եւ զլուսաւորն փոքր՝ յիշխանութիւն գիշերոյ եւ զաստեղս: Եւ եդ զնոսա ի հաստատութեան երկնից լուսատու լինել յերկիր եւ իշխել տունջեան եւ գիշերոյ, եւ մեկնել ի մէջ լուսոյն եւ ի մէջ խաւարին:

Արդ, վասն չափոյ մեծութեանն եւ դրից հաստատութեանն եւ իշխանութեանն եւ որոշմանն եւ այդոց աստեղաց կարգի հանգամանաց ասելն առայժմ արգելցի, մինչեւ բովանդակեցից զխորհուրդ սրբոյ Զատկիս եւ զտոմար ամե-

³⁰ «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 283:

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում, էջ 292:

³³ Նույն տեղում, էջ 283:

³⁴ Նույն տեղում, էջ 284—290:

նայն ազգաց, եւ ասլա պատմեցից վերջ եւս թէ՛ զինչ վասն այս աւտափնեմն եւ զինչ եկեղեցականեմն»³⁵։ Քաղվածքի ընդգծված մասը ցույց է տալիս, որ այդ ժամանակ Շիրակացին կաթողիկոսի պատվերն էր կատարում ու աշխատում Զատիկի ճառի և «ամենայն ազգաց» տոմարի վրա։ Դառի ավարտից պարզվում է, որ Շիրակացին արդեն կազմել էր «Զքնաւ մի մի ամ ՇԼԲ, ԻԸ կանոն, որով զամենայն համարն բովանդակեցի ՇԼԲ կարգ», — դրում է նա, — եւ զատիկ³⁶ մեկնեցի զմի մի կարգ առ մի մի տարի»³⁷։ Ուրեմն, նա դեռեւս կազմելու էր հայկական և այլ ազգերի տոմարները։ «Եւ արդ, զի՞նչ եւս պակասիցէ այսուհետեւ, եթէ ոչ յայտնել կարգաւորութեամբ զտոմար իւրաքանչիւր ազգաց, սկիզբն արարեալ առաջի կարգել զտոմար ազգին երբայեցւոց, զի նա իսկ է գլուխ եւ արինակ ամենայն ազգաց»³⁸, Շիրակացին խոստանում է այնուհետեւ պատմել Արեգակի, Լուսնի, աստղերի մասին, «վասն շափոյ մեծութեանն և դրից հաստատութեանն եւ իշխանութեանցն եւ որոշմանցն... եւս թէ զինչ վասն այս արտաքինքն եւ զինչ եկեղեցականքն»³⁹, Շիրակացին կատարում է իր խոստումը։ «Զխոստացեալսն մեր հատուցուք զքան՝ յարտաքնոցն առեալ զառարկութիւն. որպէս զի յետոյ յեկեղեցականն ելեալ մեր՝ գեղեցիկ հետեւացի շարադասեալ ընդունակք, զի և օրինակն այսպէս և ճշմարտութիւն կարգաւորեցաւ։

Արդ՝ ես կամիմ ուսանիլ յարտաքնոցն յայնցանէ, ուստի Պօղոս ինձ հրամայէ...»⁴⁰, և ապա շարադրում է «Յաղագս երկնի», «Յաղագս երկրի», «Յաղագս ծովու», «Յաղագս երկնային զարդուց», «Յաղագս որ ի մէջ երկնի եւ երկրի են շարժմունք և տեսութիւնք», «Յաղագս կաթին ծրոյ», «Յաղագս հիւսիսային աստեղացդ», «Յաղագս լուսնի», «Յաղագս արեգական» բաժիններից կազմված երկը, որը հայտնի է Անանիա Շիրակացու Տիեզերագիտությունն անունով։

Այս աշխատությունը, Գրիգոր Մագիստրոսի վկայությամբ, տեղավորված էր «Քննիկոնի» սկզբում՝ Ներածությունից առաջ։

Ի դեպ, Հայտնության և Զատիկի ճառերի՝ Անաստաս կաթողիկոսին ուղղված լինելը պարզում է նաև մի ուրիշ կարևոր հարց, որը Մ. Օրմանյանը կոհսել է, բայց փաստեր չի ունեցել հաստատելու համար։ Նկատելով, որ Աթանաս Տարոնացու կողմից տոմարը կարգավորելուց հետո «Հայոց տոմարը ուղղակի չէր տար Զատիկին օրը և պետք կըլլար «գալ ի զուգաւորութիւն հռոմայեցւոց», որ է ըսել Հռոմեական տոմարին կարոտ ըլլալ։ Անաստաս փափագեցաւ որ Հայոց տոմարին տրվի այնպիսի մի ուղղություն «զի թերեւս անշարժ զնա ըստ այլոց ազգաց մարթասցի յօրինել» և տարեգլուխը և տարեկան տոները չորս տարին մի օր կորցնելով չորս եղանակներու վրա շրջան շրջան և շրջան «յեղափոխք եղանակք ժամանակաց»⁴¹։ Այնուհետեւ նա շարունակում է. «Թեպետ

³⁵ Նույն տեղում, էջ 293։

³⁶ Այս վերջավորությունը շատ նման է Անդրեաս Բյուզանդացու Զատիկի ճառին, որի վերջում ոչ թէ «զատի», այլ «զատկի» է։ Այդպես պետք է լինի նաև Շիրակացու Զատիկի մասին ճառը։

³⁷ Նույն տեղում, էջ 299։

³⁸ Նույն տեղում։

³⁹ Նույն տեղում։

⁴⁰ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 1։

⁴¹ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. II, Կ. Պոլիս, 1912, էջ 748։

պատմիչները չեն հիշեր, սակայն տոմարական հաշիվով՝ ուրիշ շարժառիթ մ'ալ կրնանք նշանակել Անաստասի այդ մտադրության: Հինգհարյուրակի կամ Հայոց թվի 114 տարին, որ է 665 թվականը, ծնազատկի տարի եղած է, որ է ըսել հայերու և հույներու Զատկի օրվան վրա իրարմե զատվելուն տարին... Սյդ ծնազատկին պատահարը շատ լավ կրնան Անաստասի մտադրությունը հրավիրել տոմարի խնդրով զբաղվելու»⁴²:

Հայտնության և Զատկի տոների ճառերի գրվելու շարժառիթը, տնկասկած, ամենատվազ և ամենակարևոր հոգևոր տոների ամսաթվի գիտական հիմնավորման անհրաժեշտությունն էր: Ուրեմն, այս ճառերը, ինչպես նաև «Քննիկոնը» սկսել են գրվել մինչև 665 թ., նախքան ծնազատիկը:

Այսպիսով՝ Անանիա Շիրակացին ներածության մեջ «դայս անմահ թողում ձեզ վարդապետ» ասելով նկատի ունի «Քննիկոնը»: «Հարցմանց և լուծմանց» Առաջաբանում հիշված ներածությունը կարող է միայն «Քննիկոնին» լինել, որովհետև անիմաստ է կարծել թե միայն տեսական և գործնական թվաբանությունից կազմված դասագրքի կեսը ներածություն է: Հայտնության և Զատկի ճառերում եղած ակնարկները հայկական և այլ ազգերի տոմարների, ՇԼԲ աղյուսակի և տիեզերագիտության վերաբերյալ նաև «Քննիկոնի» մասին են, որովհետև, ինչպես արդեն տեսանք, հիշյալ գործերը «Քննիկոնի» մասերն են:

«КННИКОН» АНАНИИ ШИРАКАЦИ

А. С. МАТЕВОСЯН

Резюме

Маленькое биографическое произведение Ан. Ширакаци, до сих пор считавшееся самостоятельным трудом, как выяснилось, является частью предисловия «Кнника». В предисловие вошли четыре арифметических действия (сложение, вычитание, умножение, деление) и некоторые другие элементы теории арифметики, по сей день относимые к учебнику арифметики Анании Ширакаци. К этому выводу нас приводит ряд филологических, текстологических и кодикологических уточнений.

⁴² Նույն տեղում: